Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2018 թվականի N ____-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N510-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 2-րդ մասերին և «Ճարտարապետական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի փետրվարի 16-ի N144-Ա որոշման հավելված N1-ի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել՝

1) քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության գործունեության լիցենզավորման կարգը՝ համաձայն N1 հավելվածի.

2) քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N2 հավելվածի.

3) քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության գործունեության լիցենզիայի ձևը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի «Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի N778-Ն ու N779-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N510-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 6-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Հավելված N1
ՀՀ կառավարության 2018 թվականի
_____-ի N_____-Ն որոշման

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության գործունեության լիցենզիա (այսուհետ՝ լիցենզիա)) ստանալու համար իրավաբանական և ֆիզիկական անձանց (այսուհետ՝ հայտատու) ներկայացվող պահանջներն ու պայմանները:
2. Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության գործունեության լիցենզավորման հարաբերությունները կանոնակարգվում են «Լիցենզավորման մասին» ու «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքներով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:
3. Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորական մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության գործունեության լիցենզիան տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիցենզավորող մարմին):
4. Լիցենզիաներ տրամադրվում են ըստ հետևյալ ոլորտների և ինժեներական մասերի՝
   1) Բնակելի, հասարակական և արտադրական ոլորտ
      ա. Օդափոխության և օդի լավորակման համակարգերի, ջեռուցման համակարգերի և ցանցերի, գազամատակարարման համակարգերի նախագծում
      բ. Ջրամատակարարման և կոյուղուհամակարգեր և ցանցերի, ոռոգման համակարգերի և ցանցերի նախագծում
      գ. Էլեկտրասնուցման և էլեկտրալուսավորման համակարգերի և ցանցերի նախագծում
      դ. Կապի և հեռահաղորդակցական, այդ թվում՝ հեռուստատեսության համակարգերի, անվտանգության համակարգերի, հակահրդեհային ազդանշանային համակարգերի նախագծում

2) Տրանսպորտային ոլորտ
   - Ավտոճանապարհների, մայրուղիների, բացօթյա մարզահրապարակների և այլ հարթակների նախագծում

3) Հիդրոտեխնիկական ոլորտ
   - Ջրուղիների, ամբարտակների, հիդրոտեխնիկական թունելների, հիդրոտեխնիկական այլ կառույցների նախագծում
4) Էներգետիկ ոլորտ
   ա. Հիդրոէլեկտրակայանների, ջերմաէլեկտրակայանների, հողմային, արևային և այլ տեսակի էլեկտրակայանների, ենթակայանների, էլեկտրաէներգիայի բաշխիչ համակարգերի և համանման կառույցների նախագծում
   բ. գազի և հեղուկ վառելիքի պահեստավորման կառույցների, գազալցակայանների, գազատար համակարգերի նախագծում

5. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն:
1)Ֆիզիկական անձի մասնագիտական ունակությունների փաստը հաստատվում է սույն կարգի 4-րդ կետով սահմանված ցանկացած մասնագիտության գծով բարձրագույն կրթությամբ և քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության գործունեության համապատասխան ոլորտում առնվազն երեք տարվա անընդմեջ աշխատանքային ստաժով:
6. Լիցենզիա ստացած ֆիզիկական անձը կարող է իրականացնել տվյալ ոլորտում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեություն այն դեպքում, երբ ունի առնվազն 15 տարվա մասնագիտական աշխատանքի փորձառություն, ընդգրկվել է փորձագիտական հիմնարկի կազմում կամ վերջինիս հետ ժամկետային պայմանագրի համաձայն տրվել է փորձագիտական եզրակացություն նույն ոլորտում այլ անձանց կողմից մշակված քաղաքաշինական փաստաթղթերի վերաբերյալ՝ պայմանով, որ ինքն այդ անձի կամ նախագիծը թողարկող իրավաբանական անձի հետ չունի աշխատանքային հարաբերություններ:
7. Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության լիցենզիա կարող է ստանալ միայն իրավաբանական անձը, որի հիմնադիրների կազմում կան բարձր կարգի ռիսկայնության օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման և 15 տարվա աշխատանքային փորձառություն ունեցող առնվազն մեկական՝ արտոնագրված ճարտարապետ, ճարտարագետ-կոնստրուկտոր, ինպես նաև սույն կարգի 4-րդ մասի 1), 2), 3) և 4) կետերում նշված ոլորտներում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող մասնագետ: Ճարտարապետական գործունեության արտոնագիր կամ լիցենզիա ունենալու և աշխատանքային փորձառության պահանջը պարտադիր է նաև իրավաբանական անձի կողմից ժամանակավոր պայմանագրային հիմունքներով ներգրավվող մասնագետների համար:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

8. Հայտատուն լիցենզիա ստանալու համար լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝
1) Իրավաբանական անձ հանդիսացող հայտատուները՝
ա. փորձաքննության լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N1 ձևի, նշելով

իրավաբանական անձի անվանումն ու կազմակերպաիրավական տեսակը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները,

բ. Տեղեկություն կազմակերպությունում սույն կարգի 7-րդ կետի պահանջով ներգրավված մասնագիտական կազմի վերաբերյալ՝ համաձայն N3 ձևի (այդ թվում՝ նրանց արտոնագրերի և լիցենզիաների, մասնագիտական ունակությունը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ դիպլոմ, վկայական, վերապատրաստման վկայական, կոչումը հավաստող փաստաթղթեր կամ աշխատանքային գրքույկ, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը),

գ. Կազմակերպության կամ մասնագետի (մասնագետների) կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N4 ձևի,

դ. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագիրը.

2) ֆիզիկական անձ հանդիսացող հայտատուները՝

ա. Լիցենզիա ստանալու մասին հայտ՝ համաձայն N2 ձևի, նշելով անունը, հայրանունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. Անձնագրի պատճենը,

գ. Նախկինում իրականացված աշխատանքների ցանկը՝ համաձայն N4 ձևի,

դ. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքին համապատասխան պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը:

9. Լիցենզիա ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

III. ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

10. Լիցենզավորող մարմինը լիցենզիա տալու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին եզրակացություններ տալու նպատակով ստեղծում է լիցենզավորող հանձնաժողով, որի աշխատակարգը և անհատական կազմը հաստատում է լիցենզավորող մարմնի ղեկավարը:
11. Լիցենզավորող հանձնաժողովը լիցենզիա տալու մասին հայտը քննարկում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:
12. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում:
13. Լիցենզավորող հանձնաժողովի կողմից լիցենզիա ստանալու մասին հայտը բավարարվելու դեպքում՝ լիցենզավորող մարմինը հայտատուին տրամադրում է քաղաքաշինական փաստաթղթերի մշակման կամ փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա սույն կարգի 4-րդ կետով սահմանված ոլորտում
14. Լիցենզավորված ֆիզիկական անձն իրավունք ունի քաղաքաշինական փաստաթղթերի և ինժեներական բաժինների մշակման կամ փորձաքննության գործունեություն իրականացնել աշխատանքի անցնելով ՀՀ օրենսդրության

համաձայն քաղաքաշինական փաստաթղթերի մշակման կամ փորձաքննության գործունեություն իրականացնող կազմակերպությունում, կամ ինքնուրույն ստեղծել իրավաբանական անձ, կամ գրանցվել որպես անհատ ձեռնարկատեր:

15. Լիցենզիան վերաձևակերպվում է, և լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

Ձև N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

_____

(հայտատուի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

_____

(գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) լիցենզիա

Հայտին կցվում են՝

1) Տվյալներ կազմակերպությունում ներգրավված մասնագետների մասին՝ ըստ ոլորտների (N 3 ձև).
2) մասնագետների արտոնագրի և լիցենզիայի պատճենները.
3) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.
4) կազմակերպության կամ մասնագետների կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև).
5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

ԴԻՄՈՂ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

_____
(ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարները)

ՀԱՅՏ

Խնդրում եմ տրամադրել քաղաքաշինական փաստաթղթերի մշակման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) գործունեության լիցենզիա՝ ստորև ներկայացվող ոլորտում (ոլորտներում) գործունեություն իրականացնելու համար՝

_____

_____

_____

Հայտին կցվում են՝
1) անձնագրի պատճենը.
3) մասնագետի դիպլոմի, վերապատրաստման վկայականի, կոչումը հավաստող փաստաթղթերի կամ աշխատանքային գրքույկի պատճենները, ինչպես նաև մասնագետի անձնագրի պատճենը.
4) մասնագետի կողմից նախկինում իրականացված աշխատանքների ցանկը (N 4 ձև).
5) պետական տուրքի վճարման անդորրագիրը:

_____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Ձև N

ՏՎՅԱԼՆԵՐ

_____
(կազմակերպության անվանումը)

_____

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ՈԼՈՐՏԻ (ՈԼՈՐՏՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

NN ը/կ	Աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը	Կրթությունը	Մասնագի-տությունը	Ոլորտը (ոլորտները)	Արտոնագրի կամ լիցենզիայի համարը
1	2	3	4	5	6

_____ _____ _____
(կազմակերպության տնօրենի) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

ՁևN 4

_____

(լիցենզավորվող սուբյեկտի անվանումը (անունը, ազգանունը)

ՑԱՆԿ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Աշխատանքի (ծառայության) անվանումը	Կատարման ժամկետը	Վավերացումը (պայմանագրի, ակտի համարները)
1	2	3	4

_____ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(կազմակերպության տնօրենի կամ ֆիզիկական անձի)

_____ _____ 20 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N510-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորոկան մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության լիցենզավորման կարգն ու լիցենզիաների ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի N510-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N510-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների (բացառությամբ կոնստրուկտորոկան մասի և շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) մշակման և փորձաքննության լիցենզավորման կարգն ու լիցենզիաների ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 7-ի N510-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չի առաջանա:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 7-Ի N 510-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ**

1.**<u>Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</u>**

2017 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Ճարտարապետական գործունեության մասին» ՀՕ-235-Ն օրենքը, որի 24-րդ հոդվածի 2-րդ մասով հանձնարարվել է ՀՀ կառավարությանը՝ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման գործունեության լիցենզավորման կարգը համապատասխանեցնել օրենքի պահանջներին: Օրենքը գործողության մեջ է մտել 2018 թվականի հունվարի 6-ին:

Վերը նշված օրենքի հետ միասին ընդունվել են հարակից այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու մասին օրենքներ, այն է՝

2017 թվականի դեկտեմբերի 6-ի «Լիցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-236-Ն օրենքը և 2017 թվականի դեկտեմբերի 6-ի «Պետական տուրքի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-237-Ն օրենքը:

Սույն որոշման նախագծի ընդունումը բխում է նաև ՀՀ վարչապետի 2018 թվականի փետրվարի 16-ի N 144-Ա որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի հանձնարարականի կատարման անհրաժեշտությունից:

<u>2.Կարգավորման նպատակը և բնույթը</u>

Նախագծով նախատեսվում է քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության գործունեության լիցենզավորման ընթացակարգը համապատասխանեցնել «Ճարտարապետական գործունեության մասին» և «Լիցենզավորման մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների պահանջներին: Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակող մասնագետներին հնարավորություն կտրվի ձեռք բերել այդ գործունեության իրավունքը ստանալով անհատական լիցենզիա, որը նախկինում ձեռք էին բերում ընդգրկվելով իրավաբանական անձի աշխատողների կազմի մեջ, և դա ամրագրվում էր իրավաբանական անձի լիցենզիայի ներդիրով: Անհատական լիցենզիան ամրագրում է մասնագետի որակավորումը, մասնագիտական կարգը և ազատ ընտրության հնարավորություն է ընձեռում նրա համար՝ աշխատանքի անցնել որևէ քաղաքաշինական փաստաթղթեր մշակող կամ փորձաքննություն իրականացնող

որևէ իրավաբանական անձի մոտ, թե ինքնուրույն գործունեություն ծավալել, ստեղծելով իրավաբանական անձ և ծառայություն մատուցել ենթակապալի պայմանագրերով:

Նախագծի մյուս սկզբունքային դրույթն այն է, որ փորձաքննության լիցենզիա տրվելու է միայն իրավաբանական անձանց, որոնց հիմնադիրների կազմում առկա են համապատասխան փորձառություն ունեցող, արտոնագրված և լիցենզիա ստացած, նախագծի բոլոր բաժինները մշակող առնվազն մեկական մասնագետ: Սա կնպաստի, որպեսզի փորձաքննության գործունեության մեջ ներգրավվեն բացառապես բարձր կարգի մասնագետներ, միաժամանակ հստակեցնելով նրանց պատասխանատվությունը:

3. <u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք</u>

Նախագծի մշակմանը մասնակցել է Հայաստանի ճարտարապետների պալատը:

4. <u>Ակնկալվող արդյունքը</u>

Իրավական ակտի ընդունմամբ կհստակեցվի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և փորձաքննության գործունեություն իրականացնող բոլոր մասնագետների լիցենզավորման ընթացակարգը:

Հավելված N 2
ՀՀ կառավարության _____ թվականի
_____-ի N ____ -Ն որոշման

Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

_____
(լիցենզիայի համարը)

Ոլորտը _____
_____

Տրված է _____
(լիցենզիան տալու տարեթիվը, օրը, ամիսը, մասնագետի (ֆիզիկական անձի) անունը, ազգանունը)

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ _____

(ստորագրությունը) (անունը,ազգանունը)

Հավելված N3
ՀՀ կառավարության_____թվականի
_____-ի N_____-Ն որոշման

Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

_____
(լիցենզիայի համարը)

Տրված է _____
(լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը, իրավաբանական անձի անվանումը,

_____
գտնվելու վայրը)

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

.